


Մ Ի Օ Մ

Ա Մ Ս Ա Գ Ի Ի

ԼՉԳԼՅԻՆ ԲԼՆԸՄԻՐԵԿԸՆ ԳՐԸԳԻՏԵԿԸՆ
ԵՒ ԲԸԴԸԲԸԿԸՆ


ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ



ՅԵՐՈՒՍԸԴԷՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1876



ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻՒ 6.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒՆԻՍ 30
1876.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՅՈՒՆԱԿԱՆ ՆԵՆԳՈՒԹԻՒՆՔ

ՇԱՏ անգամ առիթ ունեցած է Միծնդ ազգայնոց հազորդել տեղւոյս Յունաց Միաբանութեան նենգութիւններն, մեզ հասուցած անհնարին շարիքներն ու աղէտները, դորձած բռնութիւններն, անիրաւութիւններն մեզ դէմ եւ մեր իրաւանց յափշտակութիւնները՝ այս տնգամ եւս կը պարտաւորի մի քանի խօսք ասել, ոչ թէ Յոյներն պարտաւերու նպատակաւ, ոչ, վասն զի ամեն որ գիտէ նոցա ինչ պիտի ազգ լինելը. պատմութենէ քիչ շատ տեղեկութիւններն ցոյց տան անձ գիտէ Յունաց նենգութիւնները, մեր կապարանոց անամութիւնը և այլոց իրաւունքներն բռնաբարելու և յափշ

տակելու վատ և անարգ ոգին, այլ միայն Ս. Աթոռոյս դառն կացութիւնը և առ այս ազգին անտարբերութիւնը ցուցնելու համար կը գրեմք:

Ազգ. ամեն անհատ կամ տեսնելով եւ կամ լսելով, գիտէ, որ մեր Ս. Երուսաղէմի մէջ բաւական հաստատութիւններ ունիմք, Ս. Տեղեաց մէջ շատ իրաւունքներ ու տեղեր ունիմք. բայց գիտե՞ն արդեօք թէ այս հաստատութիւններն, այս իրաւունքներն ու տեղերն ունենալու համար, կամ ունենալէն յետոյ հաստատ եւ անկողուստ պահպանելու համար ՚ի սիլքանէ անտի ինչ զոհողութիւններ, թէ բարոյական և թէ՛ նիւթական, ինչ

ջանքեր և աշխատութիւններ եղած են և քանի քանի անձինք զոհուած են, Ի հարկէ չեն գիտեր շատերն, որովհետեւ կան կարգ մի մարդիկ, որոց աչքին երբէք նշանակութիւն չունին այս օրինակ հաստատութիւնք, հետեւաբար բնաւ հոգերնին չէ, եթէ ամենքը մէկ տեղ կորսուելու վտանգի մէջ իյնան, կամ նոյն խոկ կորսուին. կան ալ, որք թէ և կը զգան և գիտեն այս պիտի իրաւանց մեծութիւնը և կարեւորութիւնը, բայց որովհետեւ հրմտութիւն չունին Ս. Տեղեաց խնդիրներուն, ուստի չեն գիտեր թէ՛ ինչ նշանակութիւն ունի աւելի մը, կան թեղի մը և կամ անցուգարծի մը խորհրդ և հետեւաբար առ այս եղած զոհողութեանց մեծութիւնը չեն կարող հասկանալ: Այս է պատճառը, որ երբ շատ անգամ կը լսեն թէ Երուսաղէմայ մէջ աւելածութեան համար, կարգալով անցնելու համար ազգաց Արօնական միաբանութիւններն իրարու գլուխ կոտորած են, և կամ երբ լսեն թէ՛ մեր Միաբանութիւնը Տէրութեան վնասներով ու զէնքով դուրս արտաքսուած են մեր սեփնահան Եկեղեցիէն, որպէս զի ազատ կերպով և առանց ընդգիծութեան աւելած են Յոյնք ուր որ կուզեն, կը զարմանան այս տեսակ խնդիրներուն վերայ և կը խնդան անգամ, որովհետեւ կը լսեն, ինչպէս շատերու բերնէն լսած եմք, թէ՛ աւելի լաւ չէ որ այլք մեր Եկեղեցին աւելն, ուրիշներն մեզ սպասաւորեն և մեք հանգիստ լինիմք:

Չեմք մեղադրեր այսպիսիներն, որովհետեւ ինչպէս ասացինք, չը գիտեն, չը գիտեն թէ Ս. Տեղեաց Միաբանութիւն մի իւր սահմանեալ իրաւունքէն արտաքսուող ուրիշ Միաբանութեանէ մը աւելի անգամ մի աւելած է, մեծ իրաւունք

մի կը վաստկի և ընդհակառակն միւսը կը կորուսանէ. չը գիտեն, որ մի գամի կորուստը՝ մեծ իրաւունքի մը կորուստ է: Սակայն մեղադրանաց արժանի են անոնք, որք այս ամենը գիտնալէն յետոյ ևս անտարբեր կը մնան Ս. Աթոռոյս Միաբանութեան կրօն հալածանաց, նեղութեանց և վշտերուն. մեղադրանաց արժանի են, որք գիտնալով հանդերձ՝ իբրեւ ազգ բարոյապէս ձեռնտու չեն լինիր, չեն քաջալերեր և չեն մոխթարեր անգամ:

Թող չը կարծեն արգոյ ընթերցողք, որ Սիճը բողոք կը բառնայ Ազգին դէմ, տրտունջ կընէ ազգէն. միայն պարզ խոստովանութիւն մի է այս՝ որ մեր Ագգբը իւր իրաւանց համար կարի խոտապահանջ է. կուզէ հնձել, ուր չէ սերմանած. կուզէ ժողովել, ուր չէ վատակած. թէ Ազգը՝ մեծ յոյսերով լնաչքը Երուսաղէմի վերայ դարձուցած է. բարոյական մեծ օգնութիւններ կը սպասէ: Սակայն երանի կը լինէր, եթէ խոտապահանջ իրաւաճանաչութեքառորդին չափ սարտաճանաչ եւս լինի: Շարունակ կը տառապի, շարունակ կը չարչարուի Ս. Աթոռոյս Միաբանութիւնը. նա մանաւանդ վերջին երեք չորս տարուան մէջ չը մնաց չարիք, չը մնաց վիշտ և ոչ հարուած, որ չը տեսներ և չը կրէր Յունաց կողմէն: Քեամիլ փաշայի օրով մեր սեփնական Եկեղեցիէն զինու զօրութեամբ, սուիններով արտաքսուեցանք Ի շնորհուհո Յունաց. մեր եկեղեցական զբեստներն պատառ պատառ եղան, խաչն ու դաւազանը խորտակեցան Յունաց անտիքրիստոնէական բարբարոսութեամբ և ննջեցեալը բռնաբարեցաւ. այս ամեն աններելի ոճիրներուն դէմ բողոքեցինք, բայց Ի զո՞ր. Ազգը լսեց անտարբերութեամբ և բան մի չըբաւ. Բարեխնամ Տէրութեանէն արգարասէր

Յանձնում սղով մի խնդրեցինք, որ կամ մեր իրաւունքներն եթէ ունինք, արգարատէր քննութեամբ յերեւան հանէ. և կամ եթէ չունինք բացորոշակի յայտնէ, որպէս զի գլուխնս և թեւերնս սրտոյ տեղը կոտորել չը տամք Յունաց, այլ եւս եկեղեցական պաշտամունքնս չը խախտուի և ոչ եկեղեցական սպաննիս Յունաց սրբապիղծ ձեռքը խաղալի լինի: Ի՞նչ եղաւ, ո՞ւր մնաց մեր այս խնդիրը, որ մի չը մտածեց Ազգը, չը մտածեց թէ այս եղանակու Յրուսաղէմաց Միաբանութեան վախճանը ո՞ւր պիտի եզերի, Անշուշտ Յոյք մեր այս ազգովին անսարբերութիւնը տեսնալով է, որ աւմեն օր նոր նոր նենգութիւններու կը ձեռնարկեն, ամեն օր նոր նոր սղտներու գուռ կը բանան մեր առջեւ և ամեն օր մեր արգար և դարաւոր իրաւունքներն յախշտակելու փորձ կը փորձեն անպատուհաս:

Ի Ս. Մնունգ մեր սեփհական Եկեղեցւոյ մէջ երէք պատուհանաց աւելածութիւնը երէք չորս տարի է, որ խնդրոյ տակ է. Յոյք կուզեն, որ իրենք աւելն, բայց մէք կ'ըսեմք, որ մերն լինելով մէք պիտի աւելմք: Անցեալ տարի Բ. Գուռը ճանաչելով մեր իրաւունքը՝ հրաման տուած էր, որ աւելմք. Յոյք այս հրամանագրին դէմ բողոքեցին Կառավարչին, որ Ալի Պէյն էր, բողոքը լուեցաւ և հրամանագիրը ըստ օրինի չը գործադրուեցաւ: Այս տարի քաղաքիս արդի Կառավարիչը Ծայրգ Պէյ, ինսպատ մեզ եկած հրամանագրոյն այլեւայլ մեկնութիւններ տալով ոչնչացոյց և նոր հրամանագիր մը բերել տուաւ, որ Յոյք աւելն: Երկուս աւսոյս մէջ Կառավարիչը եկած հրամանագիրը հաղորդեց Ս. Աթուոյս կառավարութեան, որոյ դէմ բողոք եղաւ սնդելով որ աւելածութեան իրաւունք

քը մերն է. չը լուեցաւ բողոքը, այլ Կառավարիչը Բեթլէհէմի Միւտիւրութեան հաղորդեց հրամանագիրը պատուիրելով որ անմիջապէս գործադրել տայ: Հրամանագրի գործադրութեան օրը Յոյք այս անիրաւութիւնը բաւական չը համարելով՝ դիւեր ատեն մեր Թիֆաթուլեան սեղանին քովի պատկերը կը գողանան, անշուշտ իրենցմէ պատկեր գնելու նպատակաւ. մերայինք կըզան Յունաց մերկապարանոց աւաղակութիւնը եւ կ'ուզեն ուրիշ պատկեր մի կախել. բայց անմիջապէս Յոյք Կառավարութեան լուր տալով՝ զինուորներ բերել կը տան և կ'արգելուն անամթաբար ըսելով, « Հայք մեր պատկերը գողացած են իրենցը գնելու համար»: Այս միջոցին երբ խնդիրն կը ծանրանայ և մեր Միաբանութիւնը կը սնդէ թէ՛ « Գուք մեր պատկերը գողացած էք»: Յունաց միաբաններէն մէկը յառաջ գալով զինուորականաց ներկայութեան կը խոստովանի, որ « Պատկերը ոչ թէ գողանալու մտք վերուցինք, այլ մեր Պատրիարքը ուզած էր, Յրուսաղէմ զրկեցինք, որ տեսնէ. վերջը նորէն տեղը պիտի դրնեմք»: Սակայն որչափ որ արեգական պէս կը յայտնուի մեր իրաւունքը և Յունաց գողութիւնը, բայց դարձեալ Միւտիւրին և քաղաքիս Կառավարչին միակողմանի և անարդարատէր ընթացքին շնորհիւ մեր պատկերը չը կախուիր և տեղը խնդրոյ տակ կը մնայ:

Մի և նոյն օրը՝ Յունիս 11 ին, տեղւոյն Միւտիւրը զբքերով կը լեցնէ մեր Եկեղեցին, եւ ապա մեր Տեսչին լուր զրկելով՝ վար կը կանչէ, նոյնպէս Յունաց Տեսուչը: Այնուհետեւ Բ. Գունէն և Կառավարչէն եկած կրկին հրամանագրերը կարգաւ տալով՝ կը հրամայէ Յունաց Տեսչին երէք պատուհաններն աւել տալ: Մեր Տեսուչը

Թախանձանօք կը խնդրէ Միւտիւրէն գործադրութիւնը երկրորդ աւուր ձը գել, մինչև ինքը Ս. Պատրիարքին գրէ և անկէ պատասխան մի ընդունի. չընդունիր Միւտիւրը եղած խնդիրն, մինչդեռ եթէ Յունաց կողմէն լինէր, անպատճառ կ'ընդունուէր. Թէ ինչ է սորա պատճառը՝ հարկ չեմք համարերը ըսել, այլ ընթերցողին կը թողումք իմաստասիրել: Մեր Լուսարարը կ'ըսէ, «Տէրութեան հրամանը սիրով կ'ընդունիմք և առ այս ըսելիք մի չունիմք. բայց չեմք թողուր, որ Յոյնք մեր Եկեղեցւոյ մէջ սանդուխ դնելով աւլեն. Թո՛ղ աւլեն ուրիկէ որ կուզեն, բայց ո՛չ մեր Եկեղեցւոյ մեջն է. Միւտիւրը կը զայրանայ և կը հրամայէ ոստիկաններուն վերցնել մեր լուսարարը մեր սեփհահան Եկեղեցւոյ մէջ և կը վերցրնեն և այսպէս բռնն զօրութեամբ աւլել կը տայ Յունաց՝ զոհելով նոցա մեր դարաւոր իրաւունքները:

Ա՛ր զգայուն սիրտ կրդիմանայ այս գործուած բռնութեանց դէմ. ո՞վ չը զարմանար երբ լսէ և տեսնէ, որ Երուսաղէմաց Կառավարիչը ՚ի շնորհուկս Յունաց մեր Եկեղեցին զօրքերով լեցրնէ և զմեզ բռնի արտաքսէ. որպէս ղի Յոյնք անարգել իրենց բռնաբարութեան և յափշտակութեան գործերն յառաջ վարեն: Մեր Ս. Պատրիարքը այս ամենուն դէմ բողոքեց Բ. Դրան, նոյնպէս բողոքեց Կառավարիչին, որ մինչև անգամ համարձակեցաւ ընդդէմ ամբողջ Հայ - Ազգին զգացմանց և իրաւանց, ընդդէմ Կայսերական հրովարտակին Պատրիարքսական իրաւունքը ջնջել՝ բողոքագիրը յետ դարձնելով: Այս մասին եւս բողոքուեցաւ Բ. Դրան հեռագրով այն յուսով, որ Օգոստոսիա Կայսրը անշուշտ չը պիտի զանայ մեզ իւր հայրական գութն ու կարեկցութիւնը:

Ահա՛ այս է Ս. Աթոռոյս Միաբանութեան ամենօրեայ փճակը. ամենօր տառապանք, ամենօր անձկութիւն և ամենօր նախատինք այլ և այլ ազգաց առջև: Թո՛ղ կարգան այս ամենը անոնք, և զգան եթէ սիրտ, խիղճ և զգացում ունին, որք առանց ամաչելու Ազգ. Երեսփոխանութեան մէջ փորձեցին իրենց մրոտ ձեռքերը Ս. Աթոռոյս Միաբանութեան երեսը քսել այլ և այլ եղջերուաքաղ ստութիւններ յերուրելով. Թո՛ղ կարգան, դատեն և վճիռ հատանեն. - Արդե՛օք Ս. Աթոռոյս Միաբանութիւնը իւր այսքան նէղութեանց մէջ ժամանակ ունի իրենց յղացած ազգամիտս խորհուրդներով զբաղիլ. Թո՛ղ կարգան նա և անոնք, որք մեծամեծ ակնկալութիւններ ունին Երուսաղէմէն. կարգան և հասկանան թէ՛ Ս. Աթոռոյս Միաբանութիւնը արտաքին հարստահարութիւններէ և արհաւիրքներէ ժամանակ ունի արդեօք Ազգին ակնկալութեանց պատասխանել. ունի միջոց Ազգին ապագային վերայ խորհելու. ունի նիւթական կարողութիւն բարոյական հաստատութեամբք Ազգին օգնելու: Ասանց պատասխաններն իւրաքանչիւր ընթերցող ինքն իւր խղճին թող տայ: Բայց մեք այսքանը միայն կ'ասեմք, որ Երուսաղէմաց Միաբանութիւնը իւր բաղմադիմի տառապանաց մէջ անգամ Ազգին պատիւը, Ազգին իրաւունքներն պաշտպանելով հանդերձ՝ կը տքնի հողուով չափ Ազգին յոյսերն եւս պըսակել: Կարող են այս մասին ամեն տեսնողներն վկայել և հաստատել, որ ըսածնուս մէջ նշանախնեցի մը չափ անգամ չափազանցութիւն չը կայ: Շուտով չը յուսահատիր Ս. Աթոռոյս Միաբանութիւնը. բայց Ազգն ալ պէտք է ձեռնտու լինի բարոյապէս ըստ իւր սխարտաւորութեան, քանի

որ ամեն բան իրենն է և իրեն կրպատ-
կանի և ոչ թէ մասնաւոր անհատի մը
կամ Միաբանութեան մը :

Յ Ի Ս Ո Ւ Ս

Յ Ա Տ Ե Ն Ի Հ Ի Է Ի Ց

Աստուածորդւոյն Յիսուսի՝ մարդ-
կային ազգին աւանդած կասկը՝ այն
է Աւետարանը , մի այնպիսի գե-
ղեցիկ , սրտառուչ , օգտաշատ և ըս-
քանչելի մատեան է՝ որոյ առհասա-
րակ մարդկային ազգի մատուցած բազ-
մադիմի օգուտներն և անհամար բա-
րիքները աշխարհի սկիզբէն ցարդ բո-
լոր հեղինակաց , ամեն փիլիսոփայից և
համայն գրաբիրաց երկնած և երկա-
սիրած հեղինակութիւնները չեն կա-
րողացած մատուցանել : Ս . Աւետա-
րանը մի այնպիսի Մատեան է , որոյ
մէջ ամեն աստիճանի և հասակի մար-
դիկ կարող են գտնել իրենց վիճակին
և կացութեան վերաբերեալ օգտակար
խրատներ և քաջաբերական յորդորներ ,
ուստի որ և է վշտացեալ , անկեալ ,
հալածեալ և տառապակիր մարդ՝ երբ
աշխարհի ցաւերէն ճնշուած մարդ-
կանց անիրաւութենէն սիրտը դառ-
նացած յաջողութենէ յուսակոտոր և
լքեալ հոգւով Աստուծոյ միտիժա-
րութեան և օգնութեան կը դիմէ .
երբ Ս . Աւետարան կը կարգայ բրիս-
տոնէական ջերմ եռանդով . քանի՛ միտ-
թարութիւն , քանի՛ սիրտանք և քա-
նի բերկրութիւն չրդար նորա այրած
սիրտն և լքեալ հոգին . երբ կը տես-
նէ հոն Աստուածորդւոյն Յիսուսի բա-

նիւ և գործով ցոյց տուած գեղեցիկ
համբերատարութեան , արիսկան նա-
հաստիւթեան վսեմ օրինակները :

Առաքինի և բարեգործ մարդ մը իւր
որ և է մի բարենպաստակ ձեռնարկու-
թեան դէմ նախանձու և չարակամու-
թեան հանած խոչնդոտները երբ կը
տեսնէ՝ անիրաւութեան եւ բռնու-
թեան փոթորիկներէն հալածուելով ,
երբ չարչարանաց եւ դատապարտու-
թեան կը մտնուի և այս ամեն զոր-
կանքներէն հոգին դառնացած և սիր-
տըն արեամբ լցուած՝ իւր միակ միտ-
թարութիւնը երբ Ս . Աւետարանի
մէջ կ'որոնէ . այնպիսին քանի՛ միտիժա-
րութիւն և քաջաբերութիւն չրդար
գտնելով հոն Աստուածորդւոյն Յի-
սուսի այն վսեմ և պատկառելի օրի-
նակը զոր ներկայացուցած է նա Հրէից
քահանայապետի դատառտանական ,
կամ լաւ եւս է ասել բռնաւորական
ստեղծին առջեւ , որոյ պատմութիւնը
սրտառուչ և սքանչելի կերպիւ կը նը-
կարագրէ Յովհաննէս Ս . Աւետարա-
նիչն :

Հրէական քահանայից , դպրաց և
փարիսեցւոց կեղծաւոր դասերն , որք
ի վաղուց հետէ Յիսուսի դէմ նախան-
ձու և ատելութեամբ լեցուած զայն
դատապարտելու և մահացնելու հնար
կ'որոնէին , մեծի ուրբաթու այն սու-
կալի գիշերն՝ սրօք և բրօք զինեալ՝ ա-
պերախտ Յուդայի առաջնորդութեամբ
երբ Յիսուսին կը հանդիպին կեղրո-
նեան հեղեղատի եզերքը և ձերբակա-
լելով զնա ժամանակի քահանայապե-
տին առջեւ կը ներկայացնեն , Քահա-
նայապետն հարցում կ'ուղղէ նմա եւ
կ'ուզէ բացատրութիւն լսել իւր բեր-
նէն իւր գործոց եւ վարդապետու-
թեանց մասին :

Առ այս Յիսուսի տուած պատաս-
խանը այսպէս կը ներկայացնէ մեզ .

նորա ամենահաւատարիմն և նոյն խակ
 չարչարանաց վայրերուն մէջ անգամ
 ՚ի նմանէ անբաժան Յովհաննէս Ս.
 Աւետարանիչն « Պատասխանի ետ նը-
 մա Յիսուս . ես յայտնապէս խօսեցայ
 յաշխարհի . ես յամենայն ժամ ուսու-
 ցի ՚ի ժողովուրդեանն եւ ՚ի տաճարի
 անդ . ուր ամենայն հրէայք ժողովեալ
 էին , և ՚ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ .
 զի հարցանես զիս , հարց զայնոսիկ ,
 որ լուանն թէ զի՛նչ խօսեցայ ահաւա-
 սիկ նոքա գիտենն թէ զի՛նչ ասացի ես » :
 Յիսուսի այս սլատասխանին մէջ ար-
 դէն պարզապէս կ'երեւի այն մեծ
 վստահութիւնն ու խղճի անդորրու-
 թիւնը , զորս կուենենան այն ամեն ան-
 մեղ և խղճի խայթէ ազատ մարդիկ
 որք ՚ի զուր կը բամբասուելին և կ'ամ-
 բաստանուին նախանձու կամ ատե-
 լութեան չար ոգիէն . և այսպիսի վըս-
 տահ , համարձակ և աներկիւղ պատաս-
 խան մը շատ անգամ բաւական է ար-
 դէն համոզել ուղիղ և արգարադատ
 դատաւոր մը ամբաստանելոյն արդա-
 րութեան մասին . սակայն քահա-
 նայապետն և նորա շուրջը խմբուած
 կեղծաւոր օրինականներն չէին կրեր
 իրենց մէջ արդարութեան և ուղղու-
 թեան զգացմանց և ոչ նշոյն անգամ .
 այլ անիրաւութեան և ատելութեան
 կրիւք վարակեալ մի միայն Արդարք
 դատապարտելու և իրենց վատ կրից
 յագուրդ տալու որ և է միջոց կ'որո-
 նէին . և ասոր յայտնի ապացոյցն այն
 է , որ նոցա ամենքն ալ արդէն գիտե-
 ին թէ՛ Յիսուսի վարդապետութիւնը
 և նորա գործերն ի՛նչ էին . նոցա շա-
 տերն արդէն շատ անգամ նորա թէ՛
 քարոզութեանը և թէ՛ հրաշալի գոր-
 ծոց ներկայ դանուելով զարմացած և
 մախաջած էին , նոցա շատերն և թե-
 րեւս ամենքն խակ արդէն բազմի-
 ցըս զնա փորձած , նորա հետ վէճի

բռնուած և ամօթապարտ յետս նա-
 հանջած էին , ուստի ակն յայտնի
 կ'երեւի , որ նոցա նպատակը Յիսու-
 սի արգար կամ մեղապարտ լինելը հաս-
 կրնալ չէր , քանզի արդէն հոգւով և
 խղճով կրգգային նորա արգարութիւ-
 նը . այլ միակ բաղձանքն էր գտնել
 մի որ և է բարոյր , որպէս զի այնու
 խաժամուժին՝ մոլեռանդութիւնը գրու-
 գուելով , Յիսուսի մահը վճռեն և այս
 խակ յուսով կ'ուղղէ քահանայապետն
 Յիսուսին այն հարցը թերեւս նորա
 մի ձախող պատասխանովը աւելի դիւ-
 րութիւն ունենայ նպատակին հաս-
 նելու :

Իսկ Յիսուս որ իւր աստուածա-
 յին ամենագէտ կարողութեամբն .
 նոցա իւրաքանչիւրի սրաին խորք թա-
 փանցած էր և հոգւոյ ծալքերը քննած՝
 գիտէր նոցա խորհուրդը . առանց իւր
 կողմէն բան մը ըսելու առ ժողովուրդն
 կ'առաքէ զնոսա որպէս զի անոնցմէ
 իմանան , որով և իւր դատաւորաց շա-
 բամտութիւնը ՚ի դերեւ հանելով , ա-
 նուղղակի կերպիւր կը կշտամբէ և քա-
 հանայապետը ըսելով թէ ես աշխար-
 հի մէջ յայտնապէս խօսեցայ ով քա-
 հանայապետ , ես ամեն ատեն ուսու-
 ցի ժողովուրդեան այն տաճարին մէջ ,
 ուր ամեն հրէայներն ժողովուած էին ,
 ես ծածուկ ոչ մի բան չը խօսեցայ և
 չը գործեցի . ես ՚ի մթան կամ ՚ի խա-
 ւարի չեմ քարոզած իմ վարդապետու-
 թիւնս , ես պարզամիտ ժողովուրդեան մի
 ամտութիւնը չեմ պատրած շոտուցիչ
 ցոյցերով կամ ահարկութեամբ . այլ
 իբրեւ հայր և իբրև եղբայր՝ գորովա-
 գին սիրով և քաղցր խնամով ցոյց տը-
 ւած եմ նոցա իրենց թշուառութիւ-
 նը , մոլորութիւնը և փրկութեան ճա-
 նապարհը . իմ քարոզած ճշմարտու-
 թիւններս անհերքելի եւ յաւիտենա-
 կան են , իմ վարդապետութիւնս ոչ

միայն Ձեզ . ոչ միայն հրէից աղբին . այլ եւ հեթանոսաց եւ ընդհանուր մարդկութեան համար է եւ ուսուցած կրօնքս տիեզերական . իմ խօսքերս , իմ քարոզութիւններս եւ վարդապետութիւնս իմ կտակս է եւ այս կտակը պիտի աւանդուի ապագայ սերունդին , ոչ միայն հրէից այլ եւ հեթանոսաց . ոչ միայն աղատից այլ եւ ծառայից , ոչ միայն արանց այլ եւ կանանց . սոյն կտակն պիտի աւանդուի անխտիր աւմեն հասակի եւ սեռի անձանց . յաղգէ յաղգ պիտի անցնի եւ պիտի տեսէ անկորուստ մինչեւ ցլխախճան . դարերու մէջ աղգեր եւ ժողովուրդներ պիտի քննեն զայն եւ պիտի համալուին նորա ճշմարտութեան . վասնորոյ ես բնաւ պատճառ մը չունիմ զանոնք գաղտնի պահելու եւ ահա այս վստահութամբ Սողոմոնեան այն մեծ տաճարին մէջ յունեն բաղմութեան հրէից խօսած եմ իմ վարդապետութիւններս . բարձր լերանց վրայ բիւրաւոր բաղմութեանց ներկայութեան քարոզած եմ իմ ուսումնս եւ իմ գործերս Երուսաղէմի բոլոր սահմանաց մէջ հրապարակուելի տես ամենեցուն եւ ՚ի լուր աշխարհի կատարած եմ . ուստի հարցուր ամեն անոնց որք տեսած են իմ գործերս եւ լսած իմ վարդապետութիւնս եւ նորա թող յայտնեն քեզ թէ ինչ խօսած եմ եւ ի՞նչ րրած :

Յիսուսի այս վսեմ եւ համարձակ պատասխանը բոլորովին ՚ի դերեւ հանելով քահանայապետի եւ նորա համախոհից չարամտութիւնը եւ եւս ՚ի նախանձ եւ ՚ի սրտմոռութիւն կը գրգռէ զնոսա , որք զյայտք եւ զպրեկ անդադար կը խորհէին թէ ի՞նչպէս մահացունեն զնա եւ ազատին նորա աղղեցութենէ , եւ ահա հոս է ամենէն զարմանալին , քանզի ի՞նչ աղղեցութիւն կրնար ունենալ այն խեղճ

աղքատ , անշուք եւ թափառական Յիսուսն . այս ճօխ , շքեղ եւ իշխանութեամբ պերճայեալ քահանայապետի եւ օրինականաց դատուն վրայ , ինչ որ է բարութեան աղղեցութիւնը չարութեան վրայ , ճշմարտութեան աղղեցութիւնը ստութեան վրայ եւ լուսոյ աղղեցութիւնը խաւարին վրայ քանզի Յիսուս թէեւ աղքատ , թէեւ անշուք , թէեւ թափառական . եւ որ իւր զլուխը հանգչեցնելու տեղ մը անգամ չունէր աշխարհի մէջ . սակայն իրեն հետ անբաժան ունէր այն Աստուածային հղոր զօրութիւնը , որ բարձր եւ գեր ՚ի վեր է աշխարհի ամեն զօրութենէն . իւր անաջառ արդարութիւնը եւ դորովպիւր գթութիւնը . իւր ամբիժ սրբութիւնը եւ անըստգիւտ կեանքը իւր հեզահամբոյր բնաւորութիւնը եւ մարդասիրական գործերն , որք բոլորովին ներհակ էին դարաց եւ փարիսեցւոց վէս եւ կեղծ ցոյցերուն եւ գոռոզ ու անհամբոյր բնաւորութեան , Յիսուսի այս ամեն քաղցր եւ բարեբարոյ հանգամանքներն զինքը սիրելի եւ պաշտելի րրած էին այն խեղճ , թշուառ եւ օրինաց խրատութեան տակ ճնշուած ողորմելի եւ տգէտ ժողովուրդեան . որք անհովիւ ոչ խարներու պէս ցիր եւ ցան մոլորած էին :

Յիսուսի վարդապետութիւններն եւ յայտնած Աստուածային ճշմարտութիւններն խաւարի մէջ խարխափող եւ ընդ լծով օրինաց , ճնշեալ ստրուկ հասարակութեան լոյս եւ շունչ տալով , վերակենդանութիւն պարգեւեց եւ ազատութիւն շնորհեց . ժողովուրդըն սթափեցաւ իւր մահառիթ թրմբութենէն . ճանաչեց իւր ճշմարիտ հովիւր , եւ թօթափեց վարձկաններու ծանր եւ դժուարակիր անուրը . յորմէ սարսափահար վննելով քահանայից

գարաց և փարիսեցւոց ընչաբազդ դասերն , կը զայրանան , կը յուզուին խորհուրդ կը կազմեն թէ ի՞նչ կերպով դարան գործեն . որպէս զի սպանանեն արդարն՝ որ իրենց դժպիսի կը թուէր . և որոյ պարզ , խոնարհ եւ անկեղծ կեանքը բոլորովին տարբեր էր իրենց շուշ , գուռը եւ կեղծաւոր կեանքէն :

Այն քահանայից դպրաց և փարիսեցւոց դասերն , որք ծանր և դժուարակիր բեռներ կը բառնային խեղճ ժողովուրդեան խոնջեալ եւ կորացեալ սուտոյ վրայ և իրենք գոնէ մաաի ծայրով անգամ շարժել չէին ուզեր . նոքա , որք ստուծեամբ և կեղծաւորութեամբ խմորուած իրենց ամեն դարձերը մի միայն ՚ի ցոյցս մարդկան կ'առնէին և իրենց գրպանները կընդլայնէին . նոքա , որք փառասիրական տենդիւ տաճորեալ ընթրեաց մէջ առաջին գահը և հրապարակաց մէջ առաջին պատուոյ տեղը նստիլ ցանկանալով , մարդիկներէն ևս ռաբբի ռաբբի կոչուիլ կը բաղձային . նոքա , որք այրեաց եւ որբոց ստացուածները առանց խղճի կը կողոպտէին , և պատճառանօք երկար աղօթքներ կընէին . նոքա որք մժղուկը կը քսմէին և ուղարկուլ կը տային և որք միայն արտաքինը սուրբ համարելով ՚ի ներքուստ լի էին ապականութեամբ և անարբութեամբ , վերջապէս նոքա որք Յրկնից արքայութիւնը ժողովուրդեան առջեւ փակելով ոչ իրենք կը մտնէին եւ ոչ այլոց մտնելու թոյլ կը տային , ՚ի հարկէ պիտի խռովէին , պիտի բարկանային և պիտի զայրանային մահու ատելութեամբ այն Յիսուսին դէմ , որ խայտառակելով իրենց ամեն խարդախութիւնները և զրկելով զիրենք ամեն իրաւունքէ , ուսոյց ժողովուրդեան թէ Աստուծոյ արքայութիւնն ամեն մար-

գու իրեն ներսի կողմն է . հասկացուց նոցա , թէ պթասիրական և առաքինական մի գործ , մեծածախ զոհերէ և բազմահարուստ ողջակէզներէ աւելի ընդունելի է Աստուծոյ առջեւ . ցոյց տուաւ նոցա յանձն իւր այն վրկիչը՝ որ նահապետաց խոստացուած , մարգարէներէն գուշակուած և հասարակութենէն կրտսասուէր անհամբեր ակնկալութեամբ և որ ձրի շնորհիւ պիտի թողուր ամեն հասակի եւ աստիճանի մարդկանց մեղքերը , միայն նոքա հաւատային թէ նա է սրդին Աստուծոյ , մատնանիչ ցոյց տուաւ նոցա ճշմարտութեան ճանապարհը և հաւկացուց թէ ի՞նչ է յաւիտենական կեանքը և զայն ստանալու միակ միջոցը :

Այսպէս ահա Աստուածորդին Յիսուս մարգասիրական անհուն գթութեամբ յերկնից ՚ի յերկիր խոնարհելով լոյս , շնորհք , գութ , մարգասիրութիւն և ամեն բարիք լիաբուռն կը սփռէ աշխարհի վրայ , և իբրեւ կաթողին հայր իւր Աստուածային թեւերը տարածած՝ խոնջեալ և տառապակիր մարդն յինքն կը հրաւիրէ խոստանալով իւր Աստուածային գրկաց մէջ հանգուցանել . իսկ ապերախտ և ըմբոստ մարդն աշխարհի սիրով կապուած , նախաչարին աթոռոյն իւր սիրտը եւ հոգին պատուանդան ըրած , տեսնելով կը տեսնէ և չը տեսներ , լքսելով կը լսէ և չիմանար . կը տեսնէ Յիսուսի անստգիւտ չկեանքը , նոքա հրաշալի գործերը եւ զարմանալի արարքը և կը համողուի թէ երբէք մի հասարակ մարդ այդպիսի գործ չէ կարող գործել , սակայն միւս կողմէն ամբարտաւանութեան ոգին և շահասիրութեան տենջը չեն թողուր համուզումը խոստովանիլ թէ նա է ճշմարտորդին Աստուծոյ . կը լսէ Յիսուսի ուղիղ վարդապետութիւնը , նոքա յայտ-

նոճ անհերքելի ճշմարտութիւնները
 և անաչառ ստատն ու յանդիմութիւ-
 նը մարդու թեանց, նախապաշարմանց,
 կուրութեան և ամեն տեսակ գեանա-
 քարչ ապականութեանց դէմ, տի ՚ի
 բերան կը լինի և լուութեամբ կը խոս-
 տովանի նորա իրաւունքը . սակայն
 միւս կողմէն մի և նոյն շար սղին դար-
 ձեալ կ'արգելու զնա եւ չը թողուր
 խոնարհիլ և ընդունիլ սիրով և փր-
 կուիլ : Բարէ, ողբալի միճակ և ողոր-
 քելի յիմարութիւն . մարդկային վատ
 էրից յառաջ բերած աղէտներն քանի՞
 ցաւալի են և սիլ կարէ թուել աննոյ-
 մէ յառաջ եկած աղէտները : Ի ստեղծ-
 մանէ առաջին մարդոյն մինչեւ ցայսօր
 հարցասիրէ՞ աւանդութիւնները, թըղ-
 թատէ՞ տրամուրթիւնները եւ յուզէ
 անցեալը և տես թէ ո՞ր աղէտ . ո՞ր կու-
 տորած և ո՞ր արիւնհեղութիւն մարդ-
 կային յիմար էրից թափէն չէ յառաջ
 եկած . մարդոյ մէջ գտնուած վատ
 կիրքերն ու զգացումներն եթէ ան-
 զուսպ և սանձարձակ թողուին, այն-
 պիտի աղէտներ յառաջ կը բերեն, յորոյ
 կը ստիպ և կը օտարափի աշխարհ :
 Մարդկային ազգի առաջին ընտանի-
 քէն սկսեալ են թարկեալ է մարդն կա-
 տաղի էրից այս աղետալի ազգեցու-
 թեան և կը կրէ ցարդ . Արարչագոր-
 ծութեան պատմութիւնը կը ներկա-
 յայնէ մեզ Աստուծոյ մը, որ իւր բար-
 բարութ ձեռքը իւր սիրելի եղբօր ար-
 դար Աբելի անարարտ արեամբ կը ներ-
 կէ և ի՞նչ է այս ստիպի անգթու-
 թեան տրամադ . Ս . Գրոյ նոյն պատ-
 մական մասը եթէ ուշիւ կարգամք, իս-
 կայն կը տեսնեմք նախանձու դեռեւս
 միտացող սղին, որ իբրեւ ստիպի ճի-
 ւաղ կը ժպտի անողորմ իւր առաջին
 յաղթանակը քաջութեամբ ՚ի գործ
 դնելուն վրայ : Աստուածապաշտն,
 արդարն եւ երկիւղածն Աբել մա-

հուամբ կը սրտով . վասն զի իւր
 եղբօր Աստուծոյ աւելի բարի սիրտ մը
 ունէր . անկից աւելի առաքինի էր և
 անկէ աւելի ջերմ եռանդով կը սպաշ-
 տէր զԱստուած : Աստուծոյ որ շար սիրտ
 մը ունէր, ծանր թուեցաւ իրեն տես-
 նել և միշտ աչքին առջեւ ունենալ
 այնպիսի մէկը, որոյ կեանքը իւր կե-
 նաց' չը նմանիր և որոյ սրտի բարութ
 թիւնը մի անբարբառ յանդիմանու-
 թիւն էր իւր սրտի շարութեան դէմ :
 Յակոբայ սրգիւր կորուսանել կ'աշխա-
 տին իրենց եղբայր արդար Յովթէփը,
 որպէս զի նորա սրտի բարութեան և
 հոգւոյ ազնուութեան քով իրենց սր-
 տի շարութիւնը և հոգւոյ վատութիւ-
 նը աւելի չը խայտառակուի : Հռոմու-
 լոս Հռովմայ առաջին բռնակալն դա-
 ւաճանութեամբ կը վերջացնէ իւր գա-
 հակից ձերունի Սարինայւոյն կեանքը,
 որոյ բարութիւնը եւ քաղցրութիւնը
 հակադատկեր մ' էր իւր շարութեան
 և բարբարոսութեան հետ : Պայ մը
 լի թագաւորն թունաւորելով կը մա-
 հացնէ այն մեծ մարդը, որ հայ հայ-
 բնեաց պաշտպանը և իւր բարերար-
 էր, որոյ սրբութիւնը, առաքինու-
 թիւնը և անաչառ ուղղութիւնն յա-
 րատել յանդիմանութիւն էր իւր մոլի
 եւ վատշուէր կենաց դէմ : Գաղիկ
 Բագրատունի հարստութեան վերջին
 շառաւիղն, այն հայրենասէր և առիւ-
 ծափրա թագաւորն իւր նախարարաց
 նախանձուն զոհ կ'երթայ և յունա-
 կան դաւաճանութեամբ իւր կեանքը
 կը զրաւէ, որոյ հետ միասին ՚ի սեւ
 գերեզման կ'իջնեն և հայ հարստու-
 թեան անգին նշխարներն :

Թողումք անցեալը, որ իւր ընդար-
 ձակութեան մէջ անհամար օրինակներ
 կը պարունակէ և որք նախանձու, ա-
 տելութեան եւ կամ անարդ շահա-
 սիրութեան ոգիէն ծնունդ առած

էն . նկատենք ներկայն , որ միշտ մեր աչքին առտն է , զոր կը տեսնենք աչքը և կը լսենք ականջօք , այս լուսաւորեալ դարուն մէջ , ուր մարդկային ազգի հոգւոյ կատարելութիւնները իրենց զենիթը հասած կը կարծուին . ուր ազատութիւն , հաւասարութիւն , եղբայրութիւնն և իրաւունք ամեն ուրեք կը քարոզուին , կը ճառուին և կը տրամաբանուին . ուր անհատական իրաւանց սահմաններ կը գծուին և ընդհանուր մարդկութեան յառաջագիմութեան , քաղաքակրթութեան և բարութիւնը կենցաղավարութեան յատակագծեր կը պատրաստուին . զարմանալի չէ տեսնել քաղաքագիտական հնարներ , քաղաքական դաւեր և նոյն իսկ արիւնահեղ և մարդախանձ պատերազմներ , որք նոր նոր և հետզհետէ յերեւան դալով հասարակութեան ապահովութիւնը կը խանգարեն և անդորրութիւնը կը վերցուն . և ինչ է այս ամենուն պատճառ . եթէ սին պատրուակներէ չը խաբուինք , եթէ այլ և այլ փողփողուն բառերու տակ սքողեալ գործուած դերերուն բուն աղբիւրը եւ նպատակը ճշդիւ ըմբռնեմք , կը տեսնեմք իսկոյն որ ամենուն աղբիւրն էւս փառասիրական , շահասիրական և նախանձու վատ զգացումներն են . և ահա սոյն մի և նոյն զգացումներն են , որք քահանայից և օրինականաց խղճին վրայ տիրապետելով և հոգւոյն վրայ բռնանալով կամաւ կը կուրացընեն զնոսա , որք չուզելով տեսնել ճրջ մարիտ լոյսը և արդարութեան արեգակը՝ աչքերնին կը գոցեն և յամառութեամբ հետամուտ կը լինին արդար Յիսուսի մահուանը , ամեն անիրաւ միջոց ՚ի գործ դնելով :

արիւնը թափելու պատրաստուած էր և աշխարհի վերայ իւր անցուցած բոլոր կենաց մէջ մի և նոյն նպատակաւ անլիհէր համարձակութեամբ քայլ առ քայլ դէպ ՚ի Գողգոթայի դագաթը կը դիմէր , այն մահատու սարաւանդակին վերայէն յաւիտենական կեանք և անմահութեան շնորհք սրբուելու . երբ դատաստանի կ'ենթարկուի՝ արժանաւայել կերպիւ կը պաշտպանէ իւր անմեղութիւնը եւ իւր վարդապետութեան ճշմարտութիւնն ու օգտակարութիւնը , որոյ վերայ չը կրնայով իւր անիրաւ դատաւորները փնտս մը դնել , այնքան կը զայրանան և կը բարբոքին մինչեւ որ նոցա արբանեակներէն մին յանդուգն ձեռօք մի ապասկ կ'ածէ Յիսուսի երեսին . « Այդպէս պատասխանի տաս քահանայացեալն » ըսելով . իբր թէ քահանայապետի ներկայութեան ճշմարտութիւն խօսիլ , արդարութիւն յայտնել եւ անմեղութիւն պաշտպանելը ծանր յանցանք և անքաւելի մեղք լինէր . Յիսուս արհամարհելով այս բռնական կոշտ արարքը և վստահ իւր առ քահանայապետն ուղղած պատասխանին ճշմարտութեան եւ համեստութեան վերայ , նոցա խղճին կը դիմէ , և անիրաւութիւննին երեսնուն կը տայ սատողութեւ եւ խղճահար խօսքով , « Եթէ չար ինչ խօսեցոյ՝ վրայեւ վասն չարին , ապա թէ ոչ ընդէր հարկանես » :

Գ . Ս . Շահանխան :



Սահայն Աստուած , որ ՚ի յաւիտենից արդէն մարդկային փրկութեան համար իւր սպասուական եւ անդին

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Հ Ա Յ Բ Ե Ն Ի

Հ Ա Վ Տ Ա Մ Ծ Ի Ծ Ա Ղ, որպէս շուշան ձիւնափառ,
Որ ընդ երեկս յարիւոյն շողց տօթահար
Ի շնորհ անոց կըքէ զճակատն 'ի խոնարհ,
Եւ անձկանօք մինայ ցայգոյն զօլարար.
Մինչ ուղեւորն անցեալ ընդ այն յամբարայլ
Գեռ հիասքանչ գիտէ ըզգեղն թառամեալ.
Այսպէս 'ի քեզ բերին աչք իմ տրտմասուգ
Ո՛ սիրունակ ինձ թագուհիդ փառազօրիկ.
Եւ հրաշացեալ պիշ ընդ աչիւնսդ նըւաղիտ՝
Առկայճք նախկին քոյոց փառաց անաղտ,
Լայնահառաչ հեծեմ՝ ողբովք սրտաբուղն,
Եւ պաղպոջէն աչքս յարտասուաց 'ի դառն ուղն :

Այլ երանի՛ թ'էր իմ լալեաց յորդառատ՝
Յառոյգ 'ի տխր պճնեալ վեհիդ ըզճակատ.
Յանկարճ սրտիս դառնն հառաչք հրամանուած
Զյաւիտենից գլեալ ձիւնիցն ըզղանգուած՝
Եւ ամէին քեզ ջինջ դարուն ծաղկաբեր,
Իբր 'ի Մասեաց 'ի սուրբ կողէն սառնասեր՝
Խոյս տայ հիւսիս յուղիցի վիժակ բիւրեղեաց,
Մինչ ընդ այերս շնչին սրղոխք Յգէմայ :

Այլ ինձ եզնւի որ հեծեծեմ սիրտ 'ի կոծ
Քան ըզմուռնչս Ովկէանուն անդնդոց .

Եւ շեթք աչացս իբր 'ի ցուրտ վե՛մ դամբանին
Պաղեալք համբուն 'ի շնչս փոխին ցրտագին :

Եղբրամարց հանգոյն յաւերս թափառեալ,
Ուր հսկայից ննջին աճիւք լուսափոյլ,
Հեքք գիտախուրք, աչք 'ի շիրիմն ակնկոր՝
Լացուցանես զլերինս 'ի յողբ աղէկատր :

Այն ինչ գլեալ զանիւս կառայն արծաթեայ՝
Լուսին ոգի գիշերց իբր հարսն նաղեալ գայ,
Շողալ առ կախ 'ի գերեզմանս Հայկազանց,
Զերդ 'ի տաճար լապտեր փայլուն եւ անանց.
Յայնժամ զմտօրդ սաւառնեալ յուշք անցելոյն,
Զորօրինակ տըմնն սաղարթք աշնայնոյն՝
Խուռնն գիմեալք բարդ բարդ կուտին հողմալար,
Շուրջ ըզճառովն որ նախ նոքիմբք պերճանայր,
Առ միխիթարն թախծեալ սրտից բարբառիս,
« Քանկցս անցեալ զինեւ յաւուրսն անդ նախնիս ,

Յորժամ փայլէր յիմ գլուխ պրակ բիւրակնեայ ,
 Եւ սիգադանձ նագէի 'գահն Արամայ ,
 Լուսին լըկայ կացեր յերկնից 'ի խորան
 Ընդ աստեղաց պարուն փառացս աննրման ,
 Քանկցս նըշլբդ փայլ ըզփայլի ճըփացին
 Յորժամ 'ի մարգս մեղու հոսանք խաղային ,
 Եւ արբենայր երկիր 'ի յուղ եւ կարագ ,
 Կաթն 'ի պտկանց ճորէր գառանց ըսպիտակ .
 Կարմիր վարդին պէս փթըթէին գիրդ մանկունք ,
 Մանկունք կայտառք , Հայոց բաղդին աստեղունք .
 Մէրք փափկացեալք մանկանային յառոյգ տխ'
 Սոսեայ 'ի ստուերս հարեալք զբերեանց տասնաղիս .
 Մատաղ կուսանք , շուշանք 'ի խաղս առուակաց ,
 Բնդ բլուրս 'ի կայթ վազս առնուին խնդազգեաց .
 Երկն անուշակ ծաւալ 'ի կէտս համբուրից ,
 Եւ սիրտք ուժգին տրոփեալք յաւիւն խանդակց :

Յայնժամ լուսին նշլբդ խաղաղ ննջէին
 Նարմանազուկ յորրան պեաց քառեկին ,
 Գդուեալք մեղմիկ 'ի գիրդ ճըղիս զեփիւռին՝
 Որ յեղէմին շնէր բարձանց հեղադին .
 Զըդոյր թախից , չըդոյր ինչ հոգ եւ աղէտ ,
 Համայն խնձիղ ու երջանկութիւն բերկրաւէտ :

Երկիր՝ որ նախ յաղու քընար ոսկեծղի
 Զնախաստեղծիցն հնչեաց հարաներդ հրաշալի ,
 Երկնագաշնակ նուազաց 'ի ձայն սրտաթունդ
 Գոռ դիւցաղանց հանէր բանակս քաջագունդ ,
 Յամիգախաղաց Աքարատայն վեհ բարձանց
 Զգիշերագէմն վանել հրոսակ թշնամեաց .
 Յարի արանց անկեալ նետից դիտապաստ՝
 Ի բլուրս Հայոց ննջէր հինից ժանտ երաստ
 Ո՛հ , սրբազան բըբուրք , խորանք անշարժուն ,
 Որ դայպն ողջոյն յափտըք խնկովք ակազձուն՝
 Եւ 'ի տուրնջեան կողովք լցեալ 'ի նարգէս ,
 Ոյր 'ի դրախտին փթթէր մերթ զարմն 'ի պարտեղ .
 Զխորդ թաթաւք յարեանց կարմիր ճապաղիս՝
 Բիւրս 'ի զարմէն տեսիք Հայկայ քաջարիս ,
 Ի սէր կրօնի եւ 'ի պարճանս Հայրենեաց
 Դիաթաւալ խաղալ 'ի խաղմ մահազդեաց ,
 Իբր ըղձաղիկ այգուն վառեալ գեղաթոյր ,
 Զոր 'ի ճըտէն կորէ մանդաղ սայրասուր

Ո՛հ , ննջեցէք խաղաղ մարտիկք աննրկունք ,
 Ո՛վ իմ լերանց գուք հերտպանձ առիւծունք .
 Վասն Հայրենեաց մեռեալք՝ ցանկետն յաւիտեան

Ասորիոյիք դուք ընդ վեհ զարմին Հայութեան .
 Ըզձեզ յաւէա երկին ըսցցէ բազմաշեայն ,
 Եազն մարգարտեայ որ ծաւալէ գլխերայն ,
 Ուիք ՚ի Մասեայ գլեալ կողից բիւրեղեայ ,
 Յորձանապատոյտ սահանք ալեայ Նրոտիայ՝
 Ըզձեզ ծովուն կապոյտ կոհակք բեկոնուա
 Մեծահառաջ մոնչմամք ընդ ժայռ եւ ընդ խուժ ,
 Ըզձեզ սօսեայ սօսաւիւնք՝ շունչ գլխերին ,
 Ըզձեզ ծաղիւնք , ըզձեզ սրղթիք , զձեզ արփին . . . :

Այսպէս լուսին անբուն աչօք դու վիայ
 Կացեր չքնաղ բաստիս յեթեր լուսախայ ,
 Տեսեր զերկիրս կանաչ օթոց ծաղիլէնկար ,
 Եւ ՚ի վերոյ զերկին՝ կապոյտ տաղաւար ,
 Ուր դանուշակն ըմպեալ զայգոյն մատըռուակ ,
 Հարսունք ծաղիկեալք յԵդէմափայրն կենտունակ ,
 Ի թռթռակ աղիս քնարայ գողթանայ՝
 Պար կազմէին պսակ ՚ի գլուխս մարգարտեայ :

Այլ արդ դարձիր հայեայ լուսին սսկեծամ ,
 Հայեանց յաւերս եւ ՚ի շիրիմն անխրնամ ,
 Իցէ՞ այս փայրն ուր փառք կեցին ընդ բիւր դարս ,
 Ուր գիւցաղանց ես փայլէի քաջ յարարս
 Աւանդ բբուունք աւերեցին հիմն ՚ի վեր
 Ձանդբանկագեղն յաշխարհս , զերկիր մաննաբեր .
 Եւ Հայաստան իբրեւ ըզհարսն անտերունչ՝
 Փառօք իւրովք սուղի յաւերս մահաշունչ :

Փայլակն այն ո՛հ , երջանկութեան սսկեծիր՝
 Էր արշալոյսն իմոց կենաց վարդաօտիւ ,
 Որ ՚ի քթթեղ ական էտռ ըզվախման ,
 Ըզձիրանին մերկեալ յանձնէն պատմուճան՝
 Փոթորկածին յամպոյ դումար բարդ ՚ի բարդ
 Յեթերական ծովուն աղիս լուսազարդ :
 Եւ իմ որդիք բնակասընունդք աշխարհիս ,
 Ի Հայրենեայ նշդեհք՝ լքբին ըզՄասիս ,
 Որոց մնչիւնք աղիողսրմ հեծութեանց
 Ընդփայր բաղխեն զտարին սիրտ անթափանց .
 Ընդփայր եւ զիմ յուղեն աղիս ցաւազին՝
 Վիրաց նոցին գտանել դարման կենսածին ,
 Աւանդ ինձ մօրս ծնողն որդւոյ սիրասուն՝
 Որոց աչիւնք ցանդ նըւաղին ՚ի լուսոյն » :

Ո՛հ , դադարեանց յողբոյդ մայրիկ իմ անոյշ ,
 Ո՛ղ դու սրտիս իմ խանդավառ միակ յուշ ,
 Փոքր միւս եւս՝ եւ հեկեկանքդ տղամուռնչ
 Լափկէզ կիզմամք ծախեալ սպառեն զիմ ըզունչ :

Պիշ աղէ՛ պիշ ընդ մարդ մլտից արեւուն ,
 Տեսանիցե՞ս անդ լոյս փայլեալ շողջոյուն ,
 Մաքեանց անդրէն նոր արշալոյս Հայութեան ,
 Լուսոյն ծրխայ՝ զբօշակ յայերս 'ի ծածան ,
 Յոյր նըշուլից փախնուեն ճիւղաղբ գիշերին ,
 Թւիք իմաստից առատացեալք ղեղանին :

Պնդեանց ասոյս իբր առնաղէն քաջ ասպետ ,
 Զի ընդ խաւար կոյ մարտնչել քեզ յաւէտ :

Ա. Է. Կարապետեան
 Կ. Պոլսէցի
 Աշտ. Ժամ. Վարժարանի :

ԽՈՐՀՈՒՐԴ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Ինչպէս Երրորդութեան խորհուրդն կը պարունակէ իւր մէջ բնազանցական և անիմանալի գաղտնիք , նոյնպէս եւ Փրկագործութիւնն կը բովանդակէ մարդոց սքանչելիքներն , իւր վախճանական նպատակի և իւր սրտի և հոգւոյ նըկարագրութիւնն : Եթէ նուրբ մտածութեամբ նկատեմք , զարմանօք պիտի տեսնեմք որ սոյն երկու խորհրդոց մէջ ծածկուած են Աստուծոյ սկզբնական դիտաւորութիւնքն և տիեզերաց կազմակերպութիւնն : Երրորդութեան փառաց առջեւ կը յայտնուի մեր փոքրիկութիւնն , կը ստորնանայ մեր իմացականութիւնը և բնաջինջ կը լինիմք մեք : Բայց սրտագրաւ փրկագործութիւնն , որոյ խորհուրդն գերազոյն ևս է , չթողուր զմեզ ընդ երկար շննալ և սքանչանալ Երրորդութեան գաղտնեաց վերայ , այլ արտասուօք կը լեցունէ մեր աչքերն եւ կ'ուղղէ զանոնք առ վայր մի խաչի վրայ :

Սոյն խորհրդէն կը ծնի սկզբնական մեղաց պատմութիւնն , որ յայտնապէս

կը ցուցնէ մարդոց բնութիւնն : Եթէ չընդունիմք սոյն մեղաց ստուգութիւնը , որ արդէն բոլոր ազգաց աւանդութեամբք հաստատուած է , անթափանցելի մթութիւն մի կը շրջապատէ զմեզ և շատ գաղտնիք և խորհուրդներ , շատ սլատահմունք և երեւոյթներ անմեկնելի կը մնան : Ի՞նչ բացատրութիւն կարեմք տալ մարդոց դէպ առ չարն ունեցած միտման , որ միշտ կը հակառակի առ բարին եղած յօժարութեան և ձայնին թէ՛ « Մենք առաքինութեան և բարութեան համար ստեղծուած եմք » : Ի՞նչպէս կարելի է բացատրել Մարդոց թշուառութեան արժանաւորութիւնը , նորա առատահոս քրտունքք , որք մեծամեծ ախօսներ կ'արդասաւորեն , յորդարտասուքն , բազմաթիւ վշտերը , արդարոց կրած դժբաղդութիւնները , չարագործին յաղթանակները և անպատուհաս յաջողութիւններն . Ի՞նչպէս կարելի է պարզել եւ մեկնել ասոնք առանց նախնական անկումն ընդունե-

բու : Նախաստեղծ Մարգոյն սոյն անկումն չընդունելով էր որ նախկին փիլիսոփայք անկան օտարոտի մոզորու թեանց մէջ եւ հնարեցին Յիշատակոյ վարդապետութիւնն (1) :

Նախամօր Եւային տրուած անէծքն բաւական է մեզ համոզել սոյն սկզբնական մեղաց ստուգութեան, ուստի ծագումն առած է փրկագործութեան մեծ եւ երանաւէտ խորհուրդն, անէծք մը որ ամեն օր կը կատարուի մեր աչաց առջեւ : Ի՞նչ արգանդի ցաւեր են ծննդաբերութեան ժամանակ եւ սակայն ի՞նչ երջանկութիւն մայրութեան : Խորհրդաւոր ազգեցութիւններ, որք միանգամայն մօր մը վշտովն և ուրախութեամբը՝ մարդոց կրկին ճակատագիրն այսինքն թշուառութիւնն և երջանկութիւնը կ'աւետեն : — Կարելի չէ մոլորիլ Աստուծոյ ճանապարհաց եւ կարգադրութեանց վերայ, մօր մը տաժանելի ճգանց մէջ մարդկութեան կրկին վախճանը տեսնելով. պէտք է հաւատալ որ անիծից և դատապարտութեան մէջ ալ Նախախնամութեան կամքը կայ :

Քաց յայտմանէ կը տեսնեմք ամեն օր զաւակունք, որք իրենց հարց համար պատժոյ ենթարկուած են, կը տեսնեմք չարագործ անձինք, որոց յանցանաց ընդհարումն՝ իւրեանց առաքինի սերունդն կը հարուածէ. այս եւս կը հաստատէ սկզբնական մեղաց գոյութիւնն : Քաց գթութեան և բարութեան Աստուած մը՝ սոյն մեղօք մարդկութեան իսպառ կորուստն տեսնելով եկաւ մեզ փրկել : Ուրեմն մեր

տկար և մեղապարտ արարածքս հարցրնեմք արդ ո՞չ մտօք՝ այլ սրտիւ, ի՞նչպէս կրնայ Աստուած մը մեռնիլ : Եթէ բարի որդւոյ մը այս տիպարն, եթէ հաւատարիմ բարեկամաց այս օրինակն, եթէ Ձիթենեաց սարի սոյն մենակեաց ազօթարարն, այս դառն բաժակն, այս խաչն, պատառատուն վարագոյրն, հերձեալ ապառաժն, բընութեան սոսկալի տեսարաններն եւ մթութիւններն չկարենան գրաւել մեր սիրտն, յափշտակել մեր մտածութիւններն, կարելի չէ այլ եւս գերագոյն հըրաշքներ և սրտագրաւ սրանչելիքներ գտնել ոչ մի բանաստեղծի գրուածոց մէջ :

Սակայն թերեւս ըսուի. « Երեւակայութիւնները իրականութիւններ չեն. մեր լուսաւորեալ դարու մէջ կ'ապրիմք որ ոչինչ չընդունիր առանց ապացոյցի : »

Ի՞նչոք թէ լուսաւորեալ դարու մէջ ըլլամք, որոյ վերայ արդէն ոմանք տարակուսած են, բայց պէտք չէ զարմանալ երբ մեզ յիշեալ առարկութիւն ըլլուի : Երբ ջերմ հսկառակութիւններ կը յուզուէին ընդդէմ քրիստոնէութեան՝ Օրիժէներն, Վլարքներն, Պօսիւէներն կը սրտասխանէին, բայց դարձեալ բնազանցական վիճաբանութիւններն կը շարունակուէին ընդդէմ սոյն կրօնի և ինչպէս Արես, Սէլս և Պօրփիւր կ'ըսէին Քրիստոնէութեան համար թէ խորագիտութեանց եւ գաղտնեաց հիւսուածք մի է, որք իսպառ անօգուտ են երեւակայութեան և սրտին և որոց աղանդաւորքն յիմար և սրտկասամիտ են : Ո՞վ կարող է պատասխանել այս անարդանաց և հաստատել որ Աւետարանական մշակութիւնը՝ բանաստեղծի մշակութիւն է, մշակութիւն փափուկ և մատաղ հոգւոց, վասն զի եթէ քրիստոնէութեան

(1) Սոյն փիլիսոփայք, հոգեփոխութիւնն ընդունելով կը հաւատային նաև որ հոգիք իրենց բնական նախորդ մարդոցն մէջ ինչ զէպքեր կ'ամ վիճակ որ ունեցած են ատանց յիշատակը կը պահեն նաև յաջորդին մէջ, ուր որ տեղափոխին :

Քերականացութիւնը նկարագրես, նո-
քա պիտի պատասխանեն թէ « Լսկ
բանաստեղծական նկարագրութիւն մ'
է այդ, պէտք է սկզբունքներ և նիւ-
թեր յառաջ բերել » . և եթէ պատ-
ճառներով հաստատել ջանաս, պիտի
ըսեն թէ՝ « Միայն զգայումներ և օ-
րինակներ պէտք են » . վերջապէս խիստ
դժուարին է համոզել այսպիսի յալ-
դողդ հակառակորդներն, որք հաս-
տատուն չեն իրենց հարցմանց մէջ և
միշտ կը փոփոխեն իրենց առարկու-
թիւններն : Պիտի ջանամք՝ փրկագոր-
ծութեան վրայ մի քանի բան եւս ա-
սելով ցուցնել թէ Քրիստոսնէական
Աստուածաբանութիւնը, այնքան ան-
անհէթեթ չէ, որչափ կը կարծուի :

Տիեզերական ընդհանուր աւան-
դութիւն մի կ'ուսուցանէ մեզ թէ՝
Մարդն ստեղծուած է, այժմեան վի-
ճակէն աւելի կատարեալ վիճակի մը
մէջ և թէ անխումբ մը տեղի ունեցած
է : Այս աւանդութիւնը կը հաստա-
տուի ամեն գուշուաց և ամեն ժամա
նակի փիլիսոփայից կարծեօք, որք շիւ-
բացին հասու լինել թէ ինչ է մարդն
բարոյապէս, առանց կատարելութեան
նախկին վիճակն ընդունելու, զոր կո-
բուսած էր Մարդկային բնութիւնը իւր
սխալմամբ :

Մարդը 'ի հարկէ որ և է վախճա-
նի մը համար ստեղծուած է . և՛ որով-
հետեւ կատարեալ ստեղծուած է,
պէտք է որ անպատճառ կատարեալ
վախճանի մը կոչուած ըլլայ :

Բայց երբ մարդն անկաւ իւր սը-
խալմամբ, արդեօք իւր վախճանական
նպատակն եւս փոփոխեցա՞ւ : Ո՛չ եր-
բէք, վասն զի նորէն չստեղծաւ, ո՛չ
երբէք, զի մարդկային ազգը չոչնչա-
ցաւ, որպէս զի մի ուրիշ սերունդի
անդի տայ :

Այսպէս ուրեմն՝ իւր անհնազան-

դութեամբ մահկանացու և անկատար
դարձած մարդն, միշտ մնացած էր իւր
անմահական և կատարեալ վախճան-
ներովն : Եւ ինչպէս պիտի կարենայ
հասնիլ այս վախճանին իւր ներկայ
անկատար վիճակովն : Առ այս անբա-
ւական է նա միայն իւր զօրութեամբ,
ինչպէս հիւանդ մարդ մը անբաւական
է բարձրանալ մտածութեան այն ա-
տիճանին, ուր կարող է հասնիլ ա-
ռողջ եւ ողջամիտ մարդն : Ուրեմն
սոյն անկման ծանրութեան և կանգ-
նման զօրութեան մէջ անհամեմատու-
թիւն մը կայ, անկումն ծանրաշէն
և մեծ, իսկ մարդոյ կանգնելու զօրու-
թիւնն՝ նուազ և աննշան : Այս անդ
ահա՛ զգալի կը լինի օգնութեան կամ
փրկագործութեան մը կարեւորու-
թիւնը :

Թերեւս ըսուի, որ « Այս պատճա-
ռաբանութիւնը առաջին մարդոյն հա-
մար է, և մեք կարող եմք մեր վախճա-
նական նպատակին հասնիլ . ի՞նչ անի-
րաւութիւն և ի՞նչ անպատեհութիւն
է մտածել որ մեք ամենքս պիտի պատ-
ժուիմք մեր նախածօր սխալմամբ » : -

Առանց այս անդ վճռելու թէ Աս-
տուած արդա՞ր կամ անիրաւ էր զմեզ
համապարտ ընելուն, սա միայն գի-
տեմք և բաւական է մեզ գիտնալ, որ
սոյն օրէնքը գոյութիւն ունի : - Ամեն
ուրեք կը գանուին որդիներ, որք ի-
րենց մեղապարտ հարց պատուհաս-
ներն կը կրեն և մինչեւ իսկ Տիեզերաց
բնական օրինաց մէջ կը դորձադրուի
սոյն օրէնքն : Երբ հօր մը շուայտու-
թեամբ ախտացեալ մանուկ մի կը ծը-
նի, ինչո՞ւ չեմք բողբեր բնութեան
դէմ՝ ինչ ըրած է այս խեղճ անմեղ
մանուկն, որ կը կրէ այլոց միութեանն
յառաջ եկած վշտերն : Այո՛, այո՛,
հոգւոյ ախտերն և սժառանգական են
ինչպէս մարմնոյնը, և մարդ կը պատ-

յուր մինչև իւր վերջին սերունդին մէջ այն յանցանօք, զոր թողած է մեզոց սկզբնագործն :

Այսպէս ահա մի կողմէն տիեզերական աւանդութեամբ ճշմարտուած անկումն և փոխանցութեամբ յաջորդած բնական եւ բարոյական ախան մնալով մարդոյ մէջ և միւս կողմէն ալ մարդոյ վախճաններն նոյն կատարելութեան մէջ ըլլալով, ինչ որ էին անհրճանազանութենէ յառաջ, թէ և մարդն ինքնին մոլորած լինի, գարձեալ փրկագործութիւն մի կամ ուրիշ որ և է միջոց մի անհրաժեշտ է մարդն իւր վախճանին արժանաւորելու համար :

Այս բնական հետեւութիւն է այն վիճակին, որոյ մէջ կը գտնուի մարդկային բնութիւնն :

Փրկագործութեան մը անհրաժեշտ կարեւորութիւնը հաստատելէն զինի կը մնայ սոցմ որոնել թէ ո՞ր կարգի մէջ կարելի է դայն գտնել : Այս կամ մարդկային կարգին մէջ կամ աւելի գերագոյն էակի մէջ կարելի է գտնալ :

(Շարունակելէ) :



Հ Ա Ն Դ Է Ս

ՐՆԹԵՐՑՄԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՆՈՐԱՊՍԱԿ ԿԱՅՍԵՐ

Ամսոյ 6ին Տեղւոյս Կառավարութեան կողմէն յատուկ հրաւիրագրով ամեն Վանքերէն խնդրուած էր երկրորդ օրը Կառավարութեան պալատը ներկայ գտնուիլ Նորաստի Կայսեր հրովարտակի ընթերցման : Որոշեալ ժամուն մեր Ամեն Ս. Պատրիարքը երեք Եպիսկոպոսաց և երեք վարդապետաց ընկերակցութեամբ գնաց Կառավարութեան պալատը, ուր մի ընդարձակ

սրահ պատրաստուած էր ընթերցման հանդիսի համար և ուր արդէն ժողոված էին թէ դատարանի և թէ զինուորական պաշտօնեայք, ինչպէս եւ իւրաքանչիւր ազգաց հոգեւոր գլուխներն, այն է Յունաց Պատրիարքը, Յոյն — Կաթողիկոս Եպիսկոպոսը, Լատինաց Պատրիարքի կողմէն փոխանորդ մի եւ Հրէից Խախամը : Երբ պաշտօնական անձինք ամբողջացան, Վսեմ Կառավարիչն Հրովարտակի ՚ի ձեռին սրահը մտնելով՝ յարգանօք Թահրիաթ Միւտիւրին ներկայացոյց կարգաբաժան համար : Արտաքոյ սրահին ժողովորդեան խուռն բազմութիւն լցուած էր հրովարտակը լսելու փափագանօք, որոց հազարապետի առաջարկութեամբ Կառավարիչը հրամայեց ներս առնել սրահի տանելուն չափ, և ապա Թահրիաթ Միւտիւրին կարգաց բարձր ձայնիւ նախ հրովարտակը եւ յետոյ Կառավարիչն ուղղեալ գիրն, որով կը ծանուցուէր նախորդ Կայսեր անկման պարագաները և Սուլթան ՄԱՌԻՍԱՅ Գահակալութիւնը : Այնուհետեւ Յունաց Պատրիարքը յունական լեզուով բարձր մաղթական ճառ մի կարգաց, յետ որոյ մեր Ս. Պատրիարքը Տաճկական բարբարով անպատրաստական բանախօսութեամբ մի Ապոստոլ — Աղիդի օրով Օսմանեան պետութեան վտանգաւոր և տխուր կացութիւնը բացատրեց և շորհակալութիւն յայտնեց Նախախնամութեան և Թուրքիոյ Հայրենասիրաց, որը համայն երկիրը մեծ վտանգէ մը աղատեցին և ապա Նորաստի Կայսեր կենաց, Նախարարաց յարատեւ հայրենասիրութեան և զինուորականաց քաջութեան համար բարեմաղթութեամբ վերջացոյց խօսքը : Բոլոր հանդիսականք բանիւ բերանոյ շորհակալութիւն յայտնեցին մեր Ս. Պատրիարքին :

Ահաւասիկ Ս. Պատրիարքի բանալիստութեան համառօտագրութիւնը :

« Պարտք մի կատարելու համար յանկարծ ոտքի կ'երէմ առանց նախապատրաստութեան . ուստի ներկայ գտնուող Էֆէնտիններուն ներողամբաութիւնը կը խնդրեմ :

Համայն արարածոց կենաց պէտքերըն հոգացող եւ ամեն ժամանակ ու ամեն վայրկեան Նախախնամողը՝ Տիեզերաց Աստուածն է :

Նա աշխարհի բոլոր աղքատ վերայ հսկելու , նոցա բարօրութեան , յառաջագիմութեան և խաղաղութեան համար թագաւորներ հաստատած է . ուրոց հրամայած է խնամ ունենալ իրենց հպատակաց կենիքին , պատուոյն եւ ընչից վերայ :

Այս աստուածուստ սահմանեալ թագաւորներէն մի եւս մեր Բարեխրնամ Թագաւորն ըլլալով ըստ իւր պարտաւորութեան իրեն յանձնուած աւմեն հպատակները իբրեւ զորդիս խրնամելու վերայ էր և է : Բայց ինչպէս շատ անգամ շատ տէրութեանց մէջ սրատահած են եւ կը պատահին միշտ աշխարհի բաղձադիմի ձախորդութիւնք , նոյնպէս հետ զհետէ անթիւ ձախորդութիւնք պատահեցան Օսմանեան Բարեխրնամ Տէրութեան մէջ , և որ ըստ օրէ չարիք ՚ի վերայ չարեաց կուտակելով ծայրագոյն սաստիութեամբ բոլանդակ կայսրութիւնը այրեց ու մրկեց առանց երբէք կենդանութեան նշան մի թողուլ : Այս տըխուր կացութեան մէջ գերեզմանին դուռը հասնող անկարող և անօգնական հիւանդի մը պէս իւր յոյսը միայն Աստուծոյ ամենակարող զօրութեան վերայ դնելով՝ իւր անբուժելի ցաւոց դեղն ու դարմանը անտի կը սպասէ :

Այս ցաւալի վիճակը Թուրքիոյ բոլոր բնակչաց յայտնի է :


Ահա՛ յանկարծ Աստուած , որ աւմենակարող է , Օսմանեան Մեծաօր Կայսրութեան բարեջան նախարարաց և հոգեւորականաց սրտին մէջ հայրենասիրական փոքրիկ կայծ մի բուրբոքեց , որ հուպ ընդ հուպ հրահարուելով՝ երկրին կորուստ սպառնացող ամեն աղէտներն ՚ի մի վայրկեան այրեց և ոչնչացոյց անձայն և անչուկ . մեծ և արժանաւոր գործ ժՔԴ դարու :

Աշխարհի պատմութեան մէջ նրմանը չք տեսնուած գործ մի էր այս , մանաւանդ մեծ դաս մի Եւրոպացի հայրենասէրներուն , որք հայրենեաց բարեկարգութիւնն ու անգործութիւնը բիրաւոր հայրենակցաց արեամբ կը գնեն . մինչդեռ Թուրքիոյ հայրենասէր Նախարարք եւ հոգեւորականք փրկեցին հայրենիքը , փրկեցին Պետութիւնը և փրկեցին համայն Թուրքիոյ բնակիչները մի քանի ժամուան մէջ առանց շիթ մը արեան՝ բաղձեցնելով Օսմանեան գահին վերայ Սուլթան Մոհրամ Ե . ըստ բաղձանաց համայն հպատակաց :

Այս փրկաւէտ յեղափոխութեան վերայ Թուրքիոյ սուզն՝ միտթարութեան , լացն եւ ողբը՝ խնդութեան փոխուեցաւ : Ամեն ոք իւր աչքը , ձեռքն ու սիրտը դէպ յերկինս բարձրացոյց երախտագիտական սուրբ ըզգացմամբ շնորհակալ լինելու Աստուծոմէ , որ շնորհեց իրեն հայրենասէր , արգարասէր եւ որդեսէր Կայսր մի , Սուլթան Մոհրամ Ե : Ամեն ոք ջերմ եւ սրտագին բարեմտղթութիւններ ուղղեց առ Բարձրեալն Օգոստ . Կայսեր կենաց և պետութեան բարելաւութեան համար : Ես ալ Միաբանութեանս և համայն Հայ-Ազգիս ուրախական եւ բարեմտղթական անկեղծ զգացմանց թարգման հանդիսանալով՝ նախ կը շնորհաւորեմ Սուլթան Մու-

բառի երջանկառիթ Քահապալութիւնը : Եւ ապա կը խնդրեմ Աստուծմէ պահել զԿայսրն իւր պարագայիւք ՚ի խա՛ս իւր երջանկի և երկար կենօք . միշտ վառ պահել բարեջան Նախարարաց սրտին մէջ հայրենասիրութեան սգին , որ առաւել եւս իմաստութեամբ խորհին և գործեն ՚ի շինութիւն Մեծաղօր Տէրութեան և ՚ի բարորութիւն ամեն հպատակաց . տալ զօրավարաց և զօրաց քաջութիւն բազկի , քաջութիւն սրտի եւ յաջողութիւն զինուց :

Կեցցէ և հաղար կեցցէ Սուլթան ԻՌԱԻՐԱՏ Թագաւորն և ամենասիրելի Կայսրն մեր :



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Օսմանեան նախարարաց մէջ հրահակաւոր եւ մեծամուկ Ռիֆաթ Փաշայի Յունաստանի և Եգիպտոսի ապստամբութեան , Ռուսաց պատերազմին , ՚ի Վիէնայ դեսպանութեան , և ՚ի Բ . Գուռն իւր նշանաւոր հանձարով և խոհեմութեամբ վարած պաշտաններուն միջոցին , ՚ի գրի առած քաղաքական և դեսպանագիտական ամենակարեւոր խնդիրները եւ դէպքերը և առ Բ . Գուռը գրած նամակներն , որ արդէն Տաճկերէն լեզուաւ հրատարակուած է , արժան գատեցինք նոյն հետաքրքրական և գիտութեան արժանի գործերը կարելի եղածին չափ մասն առ մասն թարգմանել հայերէն աշխարհիկ լեզուաւ , և Հանդիսիս միջոցաւ հետոզհետէ հրատարակել , զի յուսով որ բարեմիտ և ուսումնասէր ընթերցողաց ախորժելի կը թուի :

Ապրտաճապոտր
Վարդապետ :

ՍԿԻԶԲՆ ԳՈՐԾՈՅՆ

ՅՈՒՆԱՅ ազգը ՚ի սկզբանէ անտի՞ Օսմանեան հզօր և արդարափորով Պետութեան հովանաւորութեան տակ տաղավարած , և այսքան պէտպէս բարութեանց և անչափ շնորհաց և երախտեաց արժանացած էր : Այս հպատակ ազգէն (*) 1776 (1821) թուականի միջոցները , նախ Էֆլաֆի կողմերը , և յետոյ Մարայի կղզին և նորա շրջականները , և Միջերկրական ծովուն կղզիներէն ոմանք գուլի վերուցին եւ ապստամբեցան Օսմանեան Պետութեան դէմ . և յանդուզն համարձակութեամբ պէտպէս չարեաց և անարժան գործոց ձեռնամուկ եղան : Ուստի Օսմանեան Պետութիւնը պարտաւորեցաւ յամառ և անզուսպ ապստամբները պատուհասել և պատժել : Վասն որոյ այս ապստամբ հպատակաց վերաց խումբ խումբ բանակներ կազմեց , որով ստահակաց շատերը պատժեցան , և յափշտակուած կայսերական բերդերը եւ ամրոցները նոցա ձեռքէն ազատեցան : Ապստամբներէն անոնք որ անձնատուր հնազանդեցան , գթութիւն եւ ներողութիւն գտան : Սակայն սակաւք ոմանք յապստամբաց հաստատուն մտօք իրենց յամառութեան մէջ կացին մնացին : Եւ մինչդեռ Բ . Գուռը այս ստահակները զբարեւր պէտք եղած պատրաստութիւնները ամենայն ջանիւք յառաջ կ'տանէր , ահա 1787 (1827) թուին եւ Եֆլաֆ ամսոյ սկիզբները , Անդղիոյ Տէրութիւնն Բ . Գուռէն խնդրեց , որ Մարայի և նորա շրջականները գտնուած կղզիներուն մէջ իսլամ ժողովուրդք չը գտնուելով ինքեանք միայն բնակելու

(*) Այս թուականին յոյն կղերք մեծամեծ իրաւութիւններ յարուցին ընդդէմ Հայոց յերուսաղէմ Բն. Թեմէնէ մի եկեղեցւոյն համար : Պարմ . Երեսուշեֆ . Յետագից : Ի . Թ .

և միանգամայն ազատ լինելու շնորհն ընէ, եւ նոցա վերայ խրկուած կառավարիչները և այլ գործավարները յետս կոչուին : Եւ ապա Ռուսիոյ և Գաղղիոյ Տէրութեանց հետ միաբանելով ըսին որ Յունաց այս խռովութեան տարածումը, իրենց ծովային նաւարկութեանց և վաճառականութեան մեծամեծ վնասներ պատճառած է : Եւ Յունաց համար այս արտօնութիւնը և ազատութիւնն ձեռք բերելու համար Կ. Պօլսոյ երէք Տէրութեանց Դէսպանները պաշտօնապէս գրով խընդրեցին Սամանեան Կայսերութենէ, Սահայն սոցս առաջարկութեանց վախճանը կարի վնասակար լինելով, թէ ըստ օրինաց և թէ ըստ քաղաքական իշխանութեան, ընդունելութեան արժանի չէր կրնար ըլլալ. մանաւանդ որ Յոյնք ՚ի սկզբանէ անտի, Սամանեան հոյատակ ըլլալով, բնակած տեղերնին Տէրութեան ժառանգութիւնն էր : Ուտոի սէտք էր, անոնց մէջէն այսպիսի ապստամբութեան յանդգնողները խտտիւ պատժել, և հնազանդողները ներողութեամբ յարգել, և թէ այս խնդիրն Տէրութեան ներքին դործոց պատկանելոյն՝ այս մասին ոչ ոք երբէք իրաւունք ունէր որ և իցէ ոչ աւճառաւ միջամտելու և խնդիր յարուցանելու : Այս եղանակաւ վերոգրեալ Դէսպանաց կրկին և կրկին անգամ ծանուցուեցաւ. բայց որովհետև նորէն շատ թախանձանքներ և ստիպմունքներ եղան, Բ. Գուռը վերջնական յայտարարութեամբ իւր իրաւունքն հրապարակեց և յայտնապէս ծանոյց, թէ այս խնդրոյն ոչ ոք իրաւունք ունի միջամտելու : Ատոր վերայ Դէսպանները վերստին ծանուցին. Եւ թէ մեր այս խնդիրը չընդունուի, մեր Տէրութեանց մէջ համաձայնութիւն և դաշինք եղած է Միջերկրական ծովը նա-

ւատորմիչ հանել և քանի մի իրաց ուշագիր լինիլ : Ի պատասխանի տասր Բ. Գունէն դարձեալ ծանուցուեցաւ թէ այս խնդիրն յախտեանս չը պիտի ընդունուի :

Անախարին նաւահանգստին մէջ Կալսերակամ նաւատորմին կորուստը :

Չամիճայի և Սոլիճայի կողմերը գրունուած ապստամբ և յամառ խռովայողները կամ բնաջիջ բառնալու եւ կամ ՚ի հնազանդութի ածելու գործը, Մորայի և Ճիտտէի կուսակալ և սպարապետ Մէհէմմէտ Ալի Փաշայի որդւոյն Իպրահիմ Փաշային յանձնուած էր, որ 1723 (1828) թուին և Ռեպիլեպիլ ամսոյ 15ին, Կայսերական տորմիչէն և Եգիպտական նաւերէն, քանի մի հաս առաւ յիշեալ կղզիներուն վրայ երթալու համար, երբ Անախարին նաւահանգստէն դուրս ելաւ, դաշնակից Տէրութեց Միջերկրական ծովը ելած տորմիչը նորա ճանապարհը արգիլեց, և նա յախամայից վերստին նոյն նաւահանգիստը դարձաւ : Եւ մինչդեռ կայսերական նաւերն խարիսխ ձգած նստած էին, յիշեալ Տէրութեանց տորմիչը իբրեւ բարեկամ յանկարծ նաւահանգիստը մտաւ, և անմիջապէս պատերազմի սկսաւ. նաւահանգստին մէջ Կայսերական և Եգիպտական նաւերէն տասը հատը հրոց ճարակ տալով այրեցին, և քառասնիւ չափ եւս զօրք ինքզինքնին ծովն ընկղմեցին, թըջ նամեաց ձեռքը չիյնալու երկիւղով. այս եղելութիւնը նոյն ինքն Իպրահիմ գրով Բ. Գրան ծանոյց : Այս տխուր գէսաքին վրայ Տէրութիւնը ամեն կողմի պաշտօնէից պատուերներ խրկեց զգուշութիւն և պահպանութիւն ընելու համար :

Հրատէր ՚ի Կ. Պօլիս Երևելի պաշտօնէկց
եւ գլխատարացն այլազգեաց :

Վերոգրեալ խնդրոյն կարեւորու-
թեան համեմատ , հարկ եղած ատեն
բոլոր իսլամ ժողովուրդք միաբանու-
թեամբ ընդհանրապէս ղենուորելու ,
միաբանական կապերը ամրացնելու ,
և ուղիղ գիտաւորութեամբ Տէրու-
թեան և օրինաց վերայ խորհելու հա-
մար արեւելեան և արեւմտեան (Ա-
նապօղէ Է-Րոմիէ) եւ Արգանիայի
(Անապօղի) կողմերը գտնուած ե-
րեւելի պաշտօնեայք , իշխանք եւ
կուսակալք քաղաքապետաց եւ այլ
մեծամեծ եւ երեւելի անձինք հը-
րուիրուեցան ՚ի Կ. Պօլիս : Նոքա եւս
անմիջապէս ճամբայ ելլալով ձեմաղի
Էվլէլ ամայ սկիզբները Մայրաքաղաքը
հասան , և ըստ պաշառածի նախարա-
րաց տունները հիւրընկալուեցան , եւ
ապա պատուէր հրամանի եղաւ ըստ
հարկաւորութեան պէտք եղած և ու-
ղուած ատեն պատերազմի պիտոյք
հոգալ , և նոքա յօժարութեամբ յանձն
առին , իւրաքանչիւրն խոստացաւ իւր
երկրին կարողութեան համեմատ զօրք ,
պաշար և այլ կարեւոր պիտոյք հոգալ
եւ տալ : Յետ այնորիկ առաջի մեծի
Վէզիրին իւրաքանչիւրն ըստ արժանա-
ւորութեան իրկաներ գլեցան , և խա-
տուաւորներէն ոմանք Արքային ներ-
կայանալով խոստացան փութաջան յօ-
ժարութեամբ Տէրութեան ծառայել ,
և ամենեցուն ծանուցագրեր տրուե-
ցան , կազմ և պատրաստ գտնուիլ ,
և ապա իւրաքանչիւր ոք իւր տեղը վե-
րադարձաւ :

(Շարունակելի է)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄՆ
ԱԶԳ. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Վանայ Գեր . Առաջնորդ Արժ .
Տ . Թագէտս վարդապետի 18 5 0-
գոստոս 31 ամսաթիւ մէկ Տեղեկաւ
գիրը կը ծանուցանէր , թէ Վանայ
Խօշապ նահանգի բնակիչներէն Մար-
տիրոսեան Աւետիս անուն անձը , սր
ասկից աասն և հինգ տարուց չափ ա-
ռաջ իւր հայրենիքը ամուսնացած ,
միայն երեք ամիս իւր կնոջը հետ ան-
ցունելէն յետոյ՝ զանի թողած և մեկ-
նած էր դաւառէն , մինչեւ հիմա հոն
չը դառնային զաս՝ իւր մանկամարդ
կինը երեսի վրայ թողեր և իրեն նկատ-
մամբ բնաւ տեղեկութիւն մը չէ հա-
ղորդեր՝ ոչ իւր կողակցին և ոչ այլում :

Արժ . վարդապետը զայս կը ծա-
նուցանէ , որպէս զի պէտք եղած տը-
նօրէնութիւնն ըլլայ յայսմ մասին :

Արդ Կոստանդնուպօլսոյ Կեդր .
Վարչութեան Կրօնական Ժողովոյն ու-
րոշմանն համաձայն ներկայ Պաշտօնա-
կան ծանուցումն կը հրատարակուի
Ազգային բովանդակ լրագրաց մէջ ,
որպէս զի ո՛վ որ կը ծանաչէ յիշեալ Խօ-
շապի Մարտիրոսեան Աւետիսը , եւ
գիտէ՝ թէ ուր է նա , և ի՞նչ կ'ընէ ,
կամ թէ մեռած է թէ կենդանի . ան
միջապէս Ազգ . Պատրիարքարանիս իւ-
մայ տայ ՚ի գիտութիւն և ՚ի պատշաճ
տնօրէնութիւն :

17 Մայիս 1876 : (ԿՆԻՔ)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Պերուլէն գրոսած նամակէ մը չաղոսած :

“Որչափ որ մտադիր էի այս տեղէն
ելլալէն յետոյ երթալ նախ՝ Այն-Լու-
րոս , ուր կը գտնուի Ժեզուիթաց մեծ

դպրոցը և անտի Զամարու վանքը, ապա Զահէ քաղաքը, Պասլախէ և այն մինչեւ Գամասկոս, սակայն որովհետեւ մինչեւ Այն-թուրա հասնելին մեր առաջնորդին անձրիութիւնը եւ անհմտութիւնը չը վտահացոյց զմեզ, վերադարձանք կրկին ՚ի Պերութ: Ճանապարհին բաւական զուարճալի տեսարաններ վայելցի՛ք. մանաւանդ Նահր-էլ-սէլալ ըստած գետի բերանը շատ զուարճալի և հաճոյական է. ուր կ'երթան Պերութի բնակիչք զքօսանաց և զուարճութեան համար: Սուրա մօտի լեռան երկու ապառաժներուն վերայ պատուհանաձեւ երկու փորուածքներ կան, որոց միոյն վերայ գրուած է " 1860 - 1861. Նափսէոն Գ. Կայսր Գաղղիացոց և բանակ Գաղղիական ", մնացեալ գրերը չը կարողացայ կարդալ. վասն զի աւելի մանր էին և դժուարընթեռնիլ. միայն այսչափը կարողացայ մակաբերել, որ բանակէն յետոյ եկած բառը զօրապետի անունն լինի. կայ ուրիշ արձանագրութիւն մի եւս աւելի հին և լատիներէն լեզուաւ, այս ևս անընթեռնիլ. միայն մէկ բառը մերձաւորութեամբ Ասորիոս կարգացի. երրորդ արձանագրութիւն մի եւս գետի կամուրջին մէկ երեսը գրուած է արաբերէն լեզուաւ:

Այս տեղը Պերութէն երկու և կէս ժամ հեռաւորութեամբ է ծովքերաց ուղղութեամբ միշտ դէպ ՚ի հիւսիս: Սորա ճանապարհին վերայ քաղաքէն երկու ժամ հեռու է գետի այն մասը, զոր երկաթեայ լայն խողովակներով Պերութ կը բերեն: Զուրը դարձնելու և Պերութ հասցնելու համար ճիշդ նաւերու շոգեշարժ մեքենաներու նրման գործիներ կը բանեցնեն: Այս գործիները 6 հատ են քովէ քով զըրուած. երեքը միասին կը բանին եւ միւս երեքն եւս առանձինն: Սոցա

մօտ երեք մեծ աւաղաններ շինած են. ջրոց սղաղորութեան ատեն նախ հոն կը տանին, որ զտուի և մաքրուի:

Գալով Այն - թուրայի Ժեզուիթաց դպրոցին, կարծեմ Գամասկոսի կտորածէն քիչ մը վերջը շինուած է Գաղղիոց տէրութեան ձեռնառութեամբ: Ընդարձակ շէնք մի ունի, որոց ստորնայարկը կը բաղկանայ եկեղեցիէ մը, սեղանատունէ մը եւ այն. միջնայարկը ունի մէկ ընդարձակ սերտարան և երկու ընդարձակ ննջատուն. դասարանները քանի մի սենեակներ են վերնայարկին մէջ. ուր կայ նոյնպէս երկու ննջարան եւս: Դպրոցը ունի 150 թոշակաւոր աշակերտ. աշակերտի մը տարեկան թոշակագինն է 2000 զրուշ բաց ՚ի հագուստի, անկողնոց, թղթի, գրեանց և այլ մանաւար ծախսերը, որով զըսորոցը տարին 300,000 զրուշ եկամուսկ'ունենայ ուսելեաց և դպրոցի պաշտօնէից ծախուց համար: Այս գումարէն թէ՛ պաշտօնէից և թէ՛ ուսելեաց համար առ առաւելն 200,000 զրուշ տարեկան ծախս եթէ ըլլայ, մը նացեալը անշուշտ Ժեզուիթաց կոկորդին և նպատակին լաւ կրնայ ծառայել: Ուսմունքը միայն նախակրթական է. որովհետեւ նպատակին միայն լեզու ուսուցանել է, և դժաւորաբար Գաղղիարէն: Թէեւ կ'ուզէի ուսմանց ուղղութեան, ուսուցման եղանակին վերայ ընդարձակ տեղեկութիւններ քաղել, սակայն ճանապարհի դժուարութիւններն անձնական տկարութեան նրս հետ յոգնաբեկ ըրին զիս, և աստեց հետ մէկ տեղ լաւ առաջնորդի մը պակասութիւնը չը ներեցին այդքանէն աւելի քաղել: Օրը չորս անգամ ուսելը կը տան տղայոց. երկու անգամ կերակուր, այն է ճաշ և ընթրիք. առոււտուն փոքրիկ նախաճաշ մը և ճաշին

ու ընթրիքին մէջ տեղն ալ նոյնպէս քիչ մը բան : Երէկ սեղանաառնը պոտած ժամանակս վերջին նախընթաց պատրաստութիւնը տեսայ, փոքր կտոր մը հաց 25 տրէմ քանակութեամբ, 3 սալոր և 2 ծիրան : Կարողի գիմացի լեռներուն տեսքը շատ հաճախարար է : Զը մոռնամ ըսել, որ այս կողմերը վանքերու և եկեղեցեաց մեծ բազմութիւն կայ : Վասն զի որչափ լեռներու և բլուրներու գագաթներ տեսնուին, որք անթիւ են, նոյնչափ դանդաղատներ : Կերեւի թէ Պաստութեան ամենէն հարազատ որդիներն հոս են : Ուրիշ անգամ կը յուսամ աւելի շատ գրեւ ուրիշ տեղերու առթիւ :

Կ Է Լ Ի Պ Օ Լ Ո Ի Է Ն

Կէլիպոլուէն կը գրեն, որ Մայիս 30 ին իրենց Աւագ-երէց Տ. Յովհաննէս մաքրակրօն քահանայն առ Աստուած փոխուած է բոլոր ժողովուրդը սոգոյ և թախծութեան մէջ թողլով, որովհետեւ յիշեալ քահանայն քառասուն տարի է 'ի վեր է, որ ժողովրդեան հոգեւոր հայրութիւն կ'ընէ եղեր, և այս երկար ժամանակին մէջ իւր բարի վարուք և հեղահամբոյր բնաւորութիւնը յաջողած է ամենուն սիրտը շահել և դրսւելը չօր մը մահը անհնարին թախծութեամբ կը համակէ որդիները, բայց հոգեւոր հօր մը մահը, բոլոր հասարակութիւնը : Մեռնիլը ամէն մահկանացուի համար բնական է, բայց երանի որոց 'ի Տէր ննջեն, և երանի՛ ա նոնց, որոնք առաքինաց մը յիշատակը սուրբ և անջնջ կը պահեն իրենց մէջ :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Ք

Մայիս 30. - Յուլիէի տաճիկ երկ տասարդ մը կէս աւուր ժամանակ տաճիկ Փերեզակի մը խանութ կը մտնէ մի քանի անառակներու ընկերակցութեամբ և յանկարծ վրան յարձակելով ձեռքովն աչքերը կը գոցէ և դանակը կոկորդը մխելով իսկոյն կ'անշնչացնէ խանութպանն : Փերեզակին դրացիններն մեծ մասամբ Քրիստոնէայ լինելով և կիւրակէի առթիւ խանութինն գոցած ըլլալով ոճրագործն կը յաջողի շուտով խոյս տալ առանց մէկէ մը տեսնուելու : Տեղական կառավարութեան կողմէն անմիջապէս բժիշկ կը զրկուի և քննութեամբ կը ստուգուի դանակի հարուածով մեռած լինելն : Մինչեւ ցարդ խուզարկութիւնները կը շարունակուին, ոճրագործը ճշդիւ երեւան ելած չէ, բայց չորս կասկածաւոր անձինք բանտարկուած են, որոց մին կը կարծուի ոճրագործն :

-31.- Արդէն Հանդիսիս նախորդ թուովն հրատարակուած էր, քաղաքիս մէջ Մայիս 21 ին ուրբաթ օրը տեղի ունեցած յանկարծական երկիւղալից դէպքն : Տեղւոյս Վսեմ. կառավարիչը ուղղելով սոյն տարածայնութեան աղբիւրն գտնել, յատուկ Քննիչ Մասնաժողով մի կազմեց իւր նախագահութեամբ, որոյ անդամակցեցան իւրաքանչիւր ազգէ մասնաւոր անձինք Ի տարէի ժողովէն ընտրուած : Պատուաւոր անձինք արտօնութիւն ունեցին ուն կրնդիր լինելու : Խուզարկութիւնք թէ և խսաիւ սկսուած էին, և խնդիրը Լա տինաց Վանուց վրայ ծանրանալ կ'երեւէր, բայց չգիտցուիր թէ ինչ պատճառաւ որոշ վախճան մը չունեցաւ :

-Յունիս 12 ին գիշեր ժամանակ քաղաքիս Յուլիէի ըսուած դրան բով եղող Արաբացի բողոքականաց գրատուներ

գող մտնելով, երկաթեայ արկղին մէկ կողմի բեւեռները հանելով մէջի գրտնուած 13000 դահեկանի մօտ դրամ, քնչպէս նաև մեծ ժամացոյց մը և հովանոց մը կը դադանայ. սակայն խոյս տալով իւր թաշկինակն այնտեղ կը մտնայ, որ անծանօթ անուան մը սկզբնատառերն ունի: Կառավարութիւնը կարելի եղած միջոցներն գործ դրած է գողն գտնելու համար. կասկածելի եղող Սայտացի երկու երխտասարգներ բանտարկուած են:

— 15ին Ռուսաց շոգենաւով Յուպէ ելաւ տեղւոյս Ռուսական նորընտիր Հիւպատոս Պ. Իւէրիանօֆ, որոյ դիմաւորութեան գնացած էր տեղւոյս նախկին և այժմ Ռուստուկի ընդհ. Հիւպատոս անուանեալ Պ. Քօժէմիւքօֆ. հետեւեալ օրն ժամը 3ին միջոցները քաղաքս հասան Վանուց եւ Հիւպատոսաց թարգմաններու, պահակներու և ձիաւոր զօրաց ընկերակցութեամբ:

— 20. Երեկոյեան ժամանակ Պ. Քօժէմիւքով ուղեւորեցաւ ՚ի Յուպէ իւր պաշտօնատեղին երթալու: Մեծ բազմութիւն ընկերացաւ մինչև Քօլնիա ըստած գիւղն:

— 20. Կիւրակէ օրն ձեռնադրութեամբ Ամեն. Ս. Պատրիարքի՛ Աւագ-Սարկաւագութեան աստիճան ստացան ՚ի Ս. Յակովբ. Կիսասարկաւագ Գանիէլ Թրակացի, Գպիր Կարապետ Գրիգորեան Գլխ. — Աղաճցի, Գպիր Գրիգոր Վանցի, Գպիր Սարգիս Գրիգորեան Կեղիպօցի, Գպիր Յովակիմ Կեսարացի, Գպիր Կարապետ Յակովբեան Խարբերդցի, իրենց յօժար և աղատ կամօքն: Սոյն վերջինն Խարբերդու Վերի-Մէզերէի ժողովրդեան խնդրանօք և վիճակին Պատրիարքական Փօխանօրդ Արժ. Պեարոս վարդապետի յանձնարարականաւ ասկէ երեք տարի առաջ եկած էր

՚ի Ս. Աթոռս Քահանայութեան պատրաստուելու համար. սոյն երեքամեայ շրջանին մէջ անխնջ աշխատութեամբ ըստ բաւականին ուսեալ և իւր բարի և հըւ վարուքն արժանաւոր դատուելով գիտութեամբ Պօլսոյ Ս. Պատրիարք Հօր և հրամանաւ Ս. Աթոռոյս Ամեն. Գահակալին ամսոյս 27 ին Ս. Յարութեան տաճարին մէջ Քահանայութեան օծումն և Սուրբ աստիճանն ընկալաւ ձեռնադրութեամբ Գեր. Երեմիա Եպիսկոպոսի:

Քաջայոյս եմք որ թէ բարեշնորհ Սարկաւագուհը և թէ նորընծայ Տ. Յարութիւն Քահանայն ապագային իրենց անձնուէր ծառայութեամբ եւ հաւատարիմ պաշտօնավարութեամբ Ազգին և Եկեղեցւոյ արժանաւոր մը շահներ և Ս. Աթոռոյս պարծանք կը լինին:

— Բաւական ժամանակէ ՚ի վեր չափուջէք (պիղարիէ) ըստած տուբքն թեթեւցած էր Տէրութեան հրամանաւ այլ եւ այլ գաւառաց մէջ, իւրաքանչիւր չափ ցորենոյ 2 փարայ առնելով. սակայն քաղաքիս մէջ մասնաւորներու շահախնդրութեամբ ցարդ անգործադրելի մնացած էր, ՚ի վնաս հասարակութեան, որովհետեւ հարիւրին 5-10 կ'աւնուէր, որով տարեկան գումարը 70-80000 դահեկանի կը հասնէր. ժողովուրդը այս անիրաւ կեղեքման դէմ քանիցս բողբքած եւ Տէրութեան հրամանի գործադրութիւնը պահանջած էր: Բ. Գուռն ևս լսելով սոյն արդար բողբքը և մանաւանդ ընդհանուրին շահը մասնաւորներու շահէն վեր դասելով, խստիւ հրամայած է այս մասին կանխու եղած որոշումը գործադրել, որ և սկսած է գործադրիլ յուրախութիւն Տեղւոյս ընդհանուր հասարակութեան:

ՅԱՆԿ

Յ Ո Ւ Ն Ի Ս

Յունական նենգութիւնք	121-125
Յիսուս յատենի Հրէից	125-130
Քիչատակ Հայրենի	131-134
Խորհուրդ փրկագործութեան. (Շարունակելէ) .	134-137
Հանդէս ընթերցման հրովարտակի նորապը- սակ Կայսեր	137-139
Պատմական . (Շարունակելէ)	139-141
Պաշտօնական ծանուցումն, Աղգ. Կրօնա- կան Ժողովոյ	-141
Տեղագրական. — Պերութէն գրուած նա- մակէ մը քաղուածք	141-143
Կէլիպօլուէն	-143
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	143-144

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածայ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիէ, ճանապարհի ծախքով միասին, կանխիկ վճարելէ :
- Գ. Զատ տետրակ առնել Եւզղըզ պէտք է ամեն մէկ տետրին շորս դա- հեկան վճարէ :